# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ.՝ (+374 10) 514 101, 514 200, Ֆաքս՝ (+374 10) 545 944, էլ.փոստ՝ mayor@yerevan.am

№ 01/7-14704ն «24» 03 2014թ.

09/4485-14
«25» 03 14

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ, ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գևորգյան

Ձեր 14.03.2014թ. N.01/16/1336-14 գրությամբ ներկայացված «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ հայտնում եմ հետևյալը.

Որոշման նախագծի 3-րդ հոդվածով լրացում է կատարվում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածում, որով սահմանվում են սև և (կամ) գունավոր մետաղների ջարդոնի կամ թափոնի ընդունման կետին ներկայացվող պահանջներ: Մինչդեռ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով սև և (կամ) գունավոր մետաղների ջարդոնի կամ թափոնի ընդունման կետին ներկայացվող պահանջը չպահպանելու համար վարչական պատասխանատվություն չի սահմանվում:

«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առևտրի և ծառայությունների ոլորտում նույն օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողությունը, բացառությամբ 3.1-րդ

հոդվածի, 4-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի, 5-րդ հոդվածի 1-ին մասի, 4-րդ մասի «դ» կետի և 5-րդ մասի, 6-րդ հոդվածի 1-ին մասի «բ» և «գ» կետերի, 2-րդ մասի, 7-րդ հոդվածի 1-ին մասի «գ», «դ», «ե», «զ» և «է» կետերի, 3-րդ մասի, 9-րդ հոդվածի 3-րդ մասի և 15-րդ մասի «գ» կետի, 11-րդ հոդվածի 2-րդ և 8-րդ մասերի, 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 14-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի, 15-րդ հոդվածի 4-րդ մասի, իրականացնում են տեղական ինքնակառավարման մարմինները:

Ելնելով վերոնշյալից առաջարկվում է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում սև և (կամ)/ գունավոր մետաղների ջարդոնի կամ թափոնի ընդունման կետին ներկայացվող պահանջը չպահպանելու համար վարչական պատասխանատվություն սահմանող դրույթ նախատեսել և վարչական այդ իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունը վերապահել տեղական ինքնակառավարման մարմիններին:

Միաժամանակ առաջարկվում է տեղական տուրք սահմանել սև և /կամ/ գունավոր մետաղների ջարդոնի կամ թափոնի ընդունման կետ կազմակերպելու համար:

Հարգանքով՝

Տ.ՍԱՐԳՍՅԱՆ

Իրավաբանական վարչություն
Ձ.Առաքելյան ☎ 514-175